

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» _____ 2021թ.

N --- Ն

ՈՐՈՇՈՒՄ

**2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԳԾՈՎ
ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Սահմանել, որ Երևան քաղաքի վարչական տարածքում ավագանու որոշմամբ սահմանված տնային կենդանիներ պահելու թույլտվության համար 2021 թվականի համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են արտոնություններ՝ տեղական տուրքի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի ավագանու **2020** թվականի դեկտեմբերի **22**-ի **N304**-Ն որոշման հավելվածի **12**-րդ կետի համաձայն՝ Երևանի վարչական տարածքում ավագանու որոշմամբ սահմանված տնային կենդանիներ պահելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար տեղական տուրքը՝ յուրաքանչյուր տնային կենդանի պահելու համար սահմանվել է **5000** դրամ:

Երևան քաղաքի ավագանու **2011** թվականի հոկտեմբերի **24**-ի **N312**-Ն որոշմամբ հաստատվել են Երևան քաղաքում ընտանի կենդանիներ պահելու և հաշվառելու կանոնները: Սակայն նշված կանոններով հստակ և լիարժեք կարգավորված չեն թույլտվությունների տրամադրման, կենդանիների հաշվառման, անասնաբուժական սպասարկման ընթացակարգերի հետ կապված իրավահարաբերությունները, ինչը քաղաքացիների շրջանում հանգեցրել է տուրքի վճարումից հրաժարում: Վերջին տարիների վիճակագրությունից հետևում է, որ վերոնշյալ տեղական տուրքը վճարողների թիվը կազմում է տարեկան շուրջ **50-100** անձ:

Վերոգրյալ հանգամանքներից ելնելով՝ Երևանի քաղաքապետարանը մշակել է Երևան քաղաքում տնային կենդանիների պահման, հաշվառման և անասնաբուժական սպասարկման կազմակերպման նոր կարգ, որը ներկայումս գտնվում է քննարկման փուլում:

Հարկ է նշել, որ նոր կարգը թույլ կտա Երևան քաղաքում ապահովել տնային կենդանիների հաշվառման և դրանց պահման թույլտվությունների տրամադրման հստակ ընթացակարգ, ինչով կապահովվի բնակչության անվտանգությունը և պաշտպանվածությունն անասնաբուժական սպասարկում չանցած տնային կենդանիներից:

Ստեղծված իրավիճակում, կենդանիներ պահելու ոչ լիարժեք ընթացակարգի և տեղական տուրքի վճարման հետ կապված քաղաքացիների օբյեկտիվ դժգոհությունները մեղմելու հանգամանքով պայմանավորված, մինչև սահմանված կարգով նոր իրավական ակտ ընդունելը, անհրաժեշտություն է առաջացել Երևան քաղաքի վարչական տարածքում ընդանի կենդանիներ պահող քաղաքացիների համար սահմանել տեղական տուրքի գծով արտոնություն՝ տեղական տուրքի նկատմամբ գրոյական դրույքաչափի կիրառմամբ: Հետևաբար, Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «**2021** թվականի տեղական տուրքերի գծով արտոնություններ սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՍ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«2021 թվականի տեղական տուրքերի գծով արտոնություններ սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«2021 թվականի տեղական տուրքերի գծով արտոնություններ սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ